վկայիցս այսոքիկ ոչ երբէք եղև ՚ի վերայ բոլոր աշխարհի և ՚ի ներքոյ արեգական. այսու վկայութեամբ կարէ ամենայն ոք հաւաստալ. զի երկիրն Արարատեան և բնակօղք ՚ի նմա սեպհական ժառանգորդիք Պաշտօղք ամենասուրբ Երրորդութեան և մի Աստուածութեան ունին յատկապէս պահպանիչ, փրկիչ՝ փարատիչ իւրեանց, և ըստ ասացելոյ բանին Տեառն, որում տուն լինքն շինէ մի՛ լիցի նանիր վաստակ Շինօղաց։

Նահս դառնամ պատմել ձեզ յատկապէս պատուականութիւնն և բարեհոգութիւնն ազգին Հայոց, նախ ըստ բնական բնութեան մարդոյ սիրելի է ամենեցուն ազգն Յաբեթեան, զի մանուկ էր և ցանկալի՝ այսինքն կրասեր ՚ի մէջ նահապետացն Սէթայ և Քամայ։ Եթէ երէց ևս լեալ պատուելի է վասն ժառանգորդութեան լինքն Յաբեթ սերնդաւ իւրով Թորգոմաւ, Հայկաւ, Տիգրանաւ և Արմէնաւ և այլն։ Գովաբանելով ասեմ բարեբարոյ ազգս այս զի ունին իսկզբանէ մինչև ցայսօր սովորութիւն հիւրընկալութեան այնքան գօրեղագոյն, որում հաւանեցուցանէ զիս հաւատալ, զի այս Շնորհս ևս յատկապէս աւանդեցաւ ՚ի Տեառնէ արարչէն մերմէ ՚ի մէջ բնութեան միմիայն Հայոց, զի ծանիցէ աշխարհ յատկապէս որդեգրութիւնն սոցայ ըստ ասացելոյն բանին Տեառն այսինքն՝ եկեալն առ իս ոչ հանիցէ